
Վարչակա, 12 մայիսի, 2021թ.
Կարծիք-թիվ՝ NHRI-ARM/411/2021 [AT]

ԿԱՐԾԻՔ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Այս կարծիքի պատրաստմանը մասնակցել են Մարդու իրավունքների և իրավագիտության միջազգային փորձագետ Էլիս Թոմասը և Ֆրանսիայի պետական խորհրդի անդամ պարոն Իվ Դուտրին:

Հիմնված է Օրենքի նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տրամադրած պաշտոնական անգլերեն թարգմանության վրա:



ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

Ul. Miodowa 10, PL-00-251 Warsaw
Office: +48 22 520 06 00, Fax: +48 22 520 0605
www.legislationline.org

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանում մարդու իրավունքների հիմնական ազգային ինստիտուտն է, և որպես այդպիսին, ունի մարդու իրավունքները և հավասարությունը խթանելու և պաշտպանելու մանդատ, Հայաստանում «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված ազգային կանխարգելման մեխանիզմի կարգավիճակ, ինչպես նաև օժտված է երեխայի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հատուկ լրացուցիչ լիազորություններով: Հաշվի առնելով պատասխանատվության այս լայն շրջանակը՝ կարևոր է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ունենա ինստիտուցիոնալ և ֆինանսական անկախության անհրաժեշտ երաշխիքներ և իր տրամադրության տակ ունենա բավարար ֆինանսական միջոցներ՝ այս ինստիտուտի անխոչընդոտ և արդյունավետ գործունեության համար: Այսպիսի ֆինանսավորման անհրաժեշտությունը շեշտադրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների կարգավիճակին վերաբերող ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներում՝ որպես կառավարություններից և հարակից ֆինանսական վերահսկողությունից այսպիսի ինստիտուտների անկախությունը երաշխավորելու միջոց:

Օրենքում փոփոխություններ անելու մասին Ֆինանսների նախարարության կողմից առաջարկված օրինագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինեն նախորդ տարվա բյուջեով նախատեսված հատկացման չափից և նախատեսում է ֆինանսավորման կատարումն ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով:

Սույն դրույթը թույլ չի տալիս Պետությանը ձեռնարկել անհարկի և անհիմն բյուջետային կրճատումներ՝ ի վնաս Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ այդ կերպ ուժեղացնելով գործադիր իշխանությունից նրա անկախությունը: Եթե այս դրույթն անվերապահորեն ուժը կորցրած ճանաչվի, ապա սա կարող է էականորեն թուլացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անկախությունն ու արդյունավետ գործունեությունը, ինչը լուրջ հետևանքներ կունենա Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության

և հավասարության ապահովման վրա: Օրենքում առաջարկվող փոփոխությունը կարող է վնասել Հայաստանի՝ միջազգային պարտավորությունների և ԵԱՀԿ հանձնառությունների կատարումը և կարող է ժամանակի ընթացքում բարձրացնել՝ Փարիզյան սկզբունքներին երկրի համապատասխանության հարցը:

Ավելին, առանց ֆինանսական միջոցների հատկացումը կարգավորող որևէ անհրաժեշտ դրույթի ներառման օրենքից 8-րդ հոդվածի 5-րդ մասի ամբողջական հեռացմամբ կառաջանա բաց, որը կվնասի Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անկախությանը և արդյունավետությանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաև կոչ է անում իրավասու պետական մարմիններին՝ ապահովել Օրենքի նախագծի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին վերաբերող ցանկացած այլ նախաձեռնություն շուրջ բաց, ներառական, համակողմանի և արդյունավետ խորհրդակցությունների անցկացումը, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մասնակցությամբ: Այսպիսի խորհրդակցությունները պետք է տեղի ունենան ժամանակին և օրենսդիր գործունեության բոլոր փուլերում, նաև այն ժամանակ, երբ նախատեսվող բարեփոխումը և դրան հետևող օրենքի նախագիծը համապատասխանաբար քննարկվում են կառավարությունում, իսկ այնուհետ նաև՝ Ազգային ժողովում:

Հետևաբար, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը առաջարկում է հետևյալը՝

Ա. 8-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությունը թողնել անփոփոխ՝ կանխելով բյուջեի կրճատումները [կետ 25 և 29] կամ 8-րդ հոդվածի 5-րդ մասը վերանայելու դեպքում նկատի առնել այնպիսի դրույթի ներառումը, որը թույլ կտար բյուջեի կրճատումներ անել միայն բացառիկ հանգամանքներում, որտեղ այսպիսի կրճատումը կհիմնավորվի օբյեկտիվ կարիքներով և համաչափ կլինի այլ պետական հաստատությունների բյուջեների կրճատումներին՝ պահպանելու Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսական անկախությունը [կետ 30],

Բ. 8-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունը թողնել անփոփոխ՝ պահպանելով ֆինանսական միջոցների հատկացումների գործող կարգավորումները [կետ 33] և

Գ. իշխանությունները պետք է ապահովեն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում ցանկացած փոփոխության շուրջ բաց, ներառական, առարկայական և արդյունավետ խորհրդակցություններ՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ [կետ 40]:

Այս և այլ Առաջարկությունները ներառված են սույն Կարծիքի տեքստում և ընդգծված են հոծ տառերով:

ԵԱՀԿ հանձնառություններն իրականացնելու ճանապարհին ԵԱՀԿ մասնակից Պետություններին աջակցություն ցուցաբերելու իր մանդատի ներքո ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, մասնակից պետությունների խնդրանքով, ուսումնասիրում է օրինագծերը և գործող օրենսդրությունը՝ գնահատելով դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին և ԵԱՀԿ հանձնառություններին և տրամադրում է բարելավումներին ուղղված կոնկրետ առաջարկություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
II. ԿԱՐԾԻՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ	5
III. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
1. Մարդու իրավունքների համապատասխան միջազգային չափորոշիչները եվ ԵԱՀԿ մարդկային չափանիշով հանձնառությունները	6
2. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	8
3. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ	11
3.1. Բյուջետային կրճատումներին վերաբերող երաշխիքները.....	11
3.2. Ֆինանսական միջոցների բաշխումը.....	16
4. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ..	17

ՀԱՎԵԼՎԱԾ 1 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ անելու մասին օրենքի նախագիծ

ՀԱՎԵԼՎԱԾ 2 Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մաս

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2021թ. մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (այսուհետ՝ «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ») խնդրելով իրավական փորձաքննության ենթարկել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ մտցնելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ «Օրենքի նախագիծ»): Օրենքի նախագիծը նպատակ ունի ուժը կորցրած ճանաչել Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը:
2. 2021թ. ապրիլի 6-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատասխանել է այս դիմումին՝ հաստատելով Գրասենյակի պատրաստակամությունը իրավական կարծիք պատրաստել մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին և ԵԱՀԿ մարդկային չափանիշին վերաբերող հանձնառություններին օրենքի այս նախագծի համապատասխանության մասին:
3. Այս Կարծիքը պատրաստվել է վերը նշված դիմումին ի պատասխան: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն իրականացրել է այս գնահատումը իր մանդատի շրջանակներում՝ աջակցելու ԵԱՀԿ մասնակից Պետություններին ԵԱՀԿ հանձնառությունների իրականացման գործում:

II. ԿԱՐԾԻՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

4. Սույն Կարծիքը վերաբերում է ուսումնասիրության ներկայացված օրենքի նախագծին: Այսպիսի սահմանափակ շրջանակով՝ սույն Կարծիքը Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կարգավորող իրավական և ինստիտուցիոնալ ողջ շրջանակի ամբողջական և համակողմանի ուսումնասիրությունն չէ:
5. Կարծիքն անդրադառնում է հիմնարար հարցերի և երևան է բերում մտահոգության տեղիք տվող ոլորտները: Համառոտության նպատակին հետամուտ Կարծիքը կենտրոնանում է փոփոխություններ կամ բարելավումներ պահանջող հարցերի վրա և չի անդրադառնում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքին ամբողջությամբ: Հաջորդիվ ներկայացվող իրավական վերլուծությունը հիմնված է մարդու իրավունքների և օրենքի գերակայության միջազգային և տարածաշրջանային չափորոշիչների, նորմերի և հանձնարարականների, ինչպես նաև ԵԱՀԿ մարդկային չափանիշի հանձնառությունների վրա: Կարծիքը նաև ընդգծում է, ըստ անհրաժեշտության, այս ոլորտում ԵԱՀԿ այլ մասնակից Պետություններում առկա պատշաճ աշխատակարգերը: Հղում անելով ներպետական օրենսդրությանը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը չի ջատագովում

որևէ կոնկրետ երկրի մոդել. այն ավելի շուտ կենտրոնանում է կիրառելի միջազգային չափորոշիչների մասին հստակ տեղեկատվության տրամադրման վրա, մինևույն ժամանակ ցույց տալով, թե ինչպես են դրանք գործնականում իրականացվում մի շարք ներպետական օրենքներում: Մշտապես հարկ է ցանկացած առանձին երկրի օրինակի զգուշորեն մոտենալ, քանի որ հավանական է դրա՝ մեկ այլ երկրում կրկնօրինակման անհնարինությունը, և այսպիսի օրինակները հարկ է դիտարկել ավելի լայն ազգային ինստիտուցիոնալ և իրավական շրջանակի լույսի ներքո, ինչպես նաև երկրի համատեքստում և քաղաքական մշակույթի ֆոնին:

6. Սույն կարծիքը հիմնված է Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված Օրենքի նախագծի անգլերեն պաշտոնական թարգմանության վրա, որը կցվում է սույն փաստաթղթին որպես Հավելված: Այստեղ կցվում է նաև այն դրույթի տեքստը, որի ուժը կորցրած ճանաչելուն է ուղղված ինդրո առարկա օրինագիծը: Հնարավոր են թարգմանությամբ պայմանավորված սխալներ: Այս Կարծիքն այլ լեզվով թարգմանելու դեպքում գերակա կհամարվի անգլերեն տարբերակը:
7. Վերը նշվածի լույսի ներքո, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ցանկանում է շեշտել, որ սույն Կարծիքը չի խանգարում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին հետագայում նույնպես գրավոր կամ բանավոր հավելյալ առաջարկություններ կամ մեկնաբանություններ ձևակերպել Հայաստանում առկա համապատասխան ինդիքների շուրջ:

III. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՄԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՍՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԵԱՀԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉՍՓԱՆԻՇՈՎ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները (այսուհետ՝ ՄԻԱԻ-ները) մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման մանդատ ունեցող անկախ կառույցներ են: Դրանք «երկրի մակարդակում մարդու իրավունքների կայուն իրանման և պաշտպանությանն ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ազգային արդյունավետ համակարգերի և անփոխարինելի դերակատարների առանցքային մասն» են:¹
9. Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների կարգավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքները, որոնք հայտնի են նաև «Փարիզյան սկզբունքներ» անվանմամբ, պարունակում են ՄԻԱԻ-ների մանդատների և լիազորությունների մասին միջազգայնորեն

¹ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի զեկոյց(2007թ.), A/62/36, մաս 15:

ճանաչված կանոնները:² Փարիզյան սկզբունքները նաև սահմանում են ՄԻԱԻ-ների ստեղծման և գործունեության նվազագույն չափորոշիչները և խթանում են բազմակարծության, թափանցիկության առանցքային սկզբունքները, ՄԻԱԻ-ների գործառնական և ինստիտուցիոնալ անկախության և արդյունավետության երաշխիքները: Փարիզյան սկզբունքների ներդրումը և այս սկզբունքների հիման վրա ՄԻԱԻ-ների գնահատումն իրականացվում է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (այսուհետ՝ ՄԻԱԻԳԴ) Հավատարմագրման ենթահանձնաժողովի (այսուհետ՝ ՀԵՀ) կողմից:³ ՀԵՀ-ը զեկույցներ է հրատարակում պետությունների՝ հավատարմագրման դիմումների հիման վրա, ուսումնասիրում ՄԻԱԻ-ների կարգավիճակը և դրանց տալիս է հավատարմագրման կարգավիճակ հինգ տարին մեկ:⁴ ՄԻԱԻ-ների կարգավիճակը կարելի է նաև վերանայել, եթե փոխվում է դրանք կարգավորող օրենսդրությունը:⁵ ՀԵՀ-ն, ի լրումն, մշակում է «Ընդհանուր դիտարկումներ», որոնք հստակեցնում են և լրացուցիչ բացատրություններ են տալիս Փարիզյան սկզբունքների մասին:

- 10. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը ՄԻԱԻ-ների մասին բազմաթիվ բանաձևեր են ընդունել:⁶ Բացի այդ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (այսուհետ՝ «ՄԱԶԾ») և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (այսուհետ՝ «ՄԻԳՀԳ») հրատարակել են Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների հետ համագործակցության գործիքակազմ: Գործիքակազմը նկարագրում է ՄԻԱԻ-

² Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային մարմինների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի սկզբունքները (այսուհետ՝ «Փարիզյան սկզբունքներ») սահմանվել են Փարիզում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների մասին առաջին միջազգային աշխատաժողովի ընթացքում (7-9 հոկտեմբեր, 1991թ.) և ընդունվել են ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1993թ. դեկտեմբերի 20-ին ընդունված 48/134 բանաձևով:

³ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքը (ՄԻԱԻԳԴ), որը նախկինում հայտնի էր Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների միջազգային կոորդինացիոն կոմիտե անվանմամբ, հիմնվել է 1993թ. և աշխարհի բոլոր կողմերում Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների (ՄԻԱԻ) միջազգային ասոցիացիան է: ՄԻԱԻԳԴ-ն խթանում և հզորացնում է ՄԻԱԻ-ները՝ ըստ Փարիզյան սկզբունքների և ապահովում է մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ուղղված առաջնորդությունը:

⁴ Տե՛ս ՄԻԱԻԳԴ կանոնադրության 15-րդ հոդվածը (2018թ. փետրվարի 22-ին ընդունված տարբերակով): Հավատարմագրումը պաշտոնական ճանաչումն է առ այն, որ ՄԻԱԻ-ը բավարարում է կամ շարունակում է համապատասխանել Փարիզյան սկզբունքներին: ՀԵՀ-ը ՄԻԱԻ-ներին տալիս է «Ա», «Բ» կամ «Ը» կարգավիճակ: «Ա» կարգավիճակը նշանակում է, որ ՄԻԱԻ-ը լիովին համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին և միջազգային մակարդակում ձայնի իրավունքունեցող անդամ է ՄԻԱԻ-ների աշխատանքի վերաբերյալ քննարկումների և նիստերի ընթացքում, «Բ» կարգավիճակը նշանակում է, որ ՄԻԱԻ-ը դեռևս լիովին չի համապատասխանում Փարիզյան սկզբունքներին կամ դեռ չի ներկայացրել բավարար փաստաթղթեր այս կապակցությամբ, իսկ «Ը» կարգավիճակի հաստատությունները Փարիզյան սկզբունքներին չհամապատասխանող հաստատություններն են: Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանը այս պահին ունի «Ա» կարգավիճակ (այս կապակցությամբ տե՛ս ՀԵՀ-ի վերջերս ներկայացված առաջարկությունները, ՀԵՀ-ի զեկույցը և 2019թ. մարտին արված առաջարկությունները, էջ 13 - 15):

⁵ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (այսուհետ՝ «ՄԱԶԾ») և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (այսուհետ՝ «ՄԻԳՀԳ»), «Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների հետ համագործակցության գործիքակազմ» (այսուհետ՝ «ՄԱԶԾ-ՄԻԳՀԳ գործիքակազմ») դեկտեմբեր 2010թ. , էջ 241:

⁶ Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողով, *Բանաձև թիվ 70/163 Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին*, A/RES/70/163, ընդունվել է 17 դեկտեմբերի, 2015թ. : *Բանաձևեր թիվ 63/169 և 65/207 Օմբուդսմանի, միջնորդի կամ մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման գործում մարդու իրավունքների ազգային այլ ինստիտուտների դերի մասին*, A/RES/63/169 և A/RES/65/207, համապատասխանաբար ընդունվել են 18 դեկտեմբերի, 2008թ. և 21 դեկտեմբերի, 2010թ. , *Բանաձևեր թիվ 63/172 և 64/161 Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին*, A/RES/63/172 և A/RES/64/161, ընդունվել են համապատասխանաբար 18 դեկտեմբերի, 2008թ. և 18 դեկտեմբերի, 2009թ. , և *Բանաձև թիվ 48/134 Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին*, A/RES/48/134, ընդունվել է 4 մարտի 1994թ.: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 27/18 բանաձևը մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին, ընդունվել է 7 հոկտեմբերի, 2014թ.:

ների տարբեր մոդելներ և ուղղորդում է տրամադրում այն մասին, թե ինչպես կարելի է աջակցել ՄԻԱԻ-ներին դրանց գոյության տարբեր փուլերում՝ ստեղծումից մինչև կայացած ՄԻԱԻ-ներ դառնալու ճանապարհին զարգացմանն ուղղված տրամադրվող աջակցության ներկայացմամբ:⁷

11. Եվրոպայի խորհրդի մակարդակում (այսուհետ՝ «ԵԽ») Խորհրդարանական և Վեհաժողովի 1615 բանաձևը (2003թ.) թվարկում է մի շարք առանձնահատկություններ, որոնք էական են օմբուդսմանի ինստիտուտի արդյունավետ գործունեության համար:⁸ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ «Վենետիկի հանձնաժողով»), ի լրումն ՄԻԱԻ-ների մասին օրենսդրության շուրջ բազմաթիվ կարծիքների, 2019թ. հրապարակել է նաև Օմբուդսմանի ինստիտուտի պաշտպանության և խթանման սկզբունքները («Վենետիկի սկզբունքներ»):⁹
12. 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթում ԵԱՀԿ մասնակից պետությունները հանձնառություն են ստանձնել՝ նպաստել «մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտում անկախ ազգային ինստիտուտների ստեղծմանը և հզորացմանը»:¹⁰ ԵԱՀԿ-ի այլ հանձնառությունները հետագայում նորից շեշտել են մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման գործում ՄԻԱԻ-ների կարևոր դերը, մասնավորապես՝ դրան անդրադառնալով Ահաբեկչության դեմ պայքարին ուղղված Բուխարեստի գործողությունների ծրագրում, որը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առջև խնդիր է դնում շարունակել և ընդլայնել «Պետությունների խնդրանքով ժողովրդավարական հաստատությունների կառուցումը խթանելու ջանքերն ու օժանդակությունը, ի թիվ այլոց, աստարելով [...] օմբուդսմանի ինստիտուտի հզորացմանը»:¹¹

2. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

13. 2004թ. ստեղծված Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Հայաստանում մարդու իրավունքների ազգային հիմնական ինստիտուտն է, որն այս պահին ունի ՀԵՀ «Ա» կարգի հավատարմագիր: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի ամենավերջին տարբերակը (այսուհետ՝ «Օրենք») ընդունվել է 2016թ. , լրամշակումներով՝ ապահովելու դրա համապատասխանությունը 2015թ. Սահմանադրությանը: Օրենքի 2-րդ հոդվածի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանին է

⁷ ՄԱԶԾ-ՄԻԳՀԳ «Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների հետ համագործակցության գործիքակազմ» (այսուհետ՝ «ՄԱԶԾ-ՄԻԳՀԳ գործիքակազմ») դեկտեմբեր 2010թ. , էջ 241:

⁸ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽՄՎ), *Հանձնարարական 1615 (2003) Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մասին*, 8 սեպտեմբեր, 2003թ. : Տե՛ս նաև համապատասխան այլ ԵԽ փաստաթղթերը, օրինակ՝ ԵԽ Նախարարների կոմիտեի *Հանձնարարական Rec(97)14E Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների ստեղծման մասին*, 30 սեպտեմբերի, 1997թ: ԵԽՄՎ, *Հանձնարարական 1959 (2013) Եվրոպայում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հզորացման մասին*, ընդունվել է 4 հոկտեմբերի, 2013թ.:

⁹ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Օմբուդսմանի ինստիտուտի պաշտպանության և խթանման սկզբունքներ («Վենետիկի սկզբունքներ»), 3 մայիսի, 2019թ.:

¹⁰ Տե՛ս ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթուղթը (1990թ.), մաս 27:

¹¹ Տե՛ս «Ահաբեկչության դեմ պայքարի Բուխարեստի գործողությունների ծրագիրը» (2001թ.), ԵԱՀԿ նախարարների խորհրդի՝ Ահաբեկչության դեմ պայքարի MC(9).DEC/1 որոշման հավելված, 4 դեկտեմբերի, 2001թ. , մաս 10:

նաև վերապահված Հայաստանում «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Նույն դրույթը նաև մասնավորեցնում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը ներառում է ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների՝ պետության կողմից կիրառման մշտադիտարկումը, ինչպես նաև երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և դրանց խախտումների կանխարգելումը:

14. Սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին մասը Մարդու իրավունքների պաշտպանին նկարագրում է որպես «անկախ պաշտոնատար անձ , որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը», իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքով սահմանված դեպքերում՝ «նաև կազմակերպությունների կողմից» մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, և «նպատում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»: Սահմանադրության 193-րդ հոդվածը պարունակում է Մարդու իրավունքների պաշտպանի կոնկրետ երաշխիքներ, օրինակ՝ նախատեսելով անձեռնմխելիության իրավունքը, գործունեության այն տեսակները, որոնք անհամատեղելի են Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթի հետ, և ֆինանսավորմանը վերաբերող մի շարք հատուկ դրույթներ: Այսպիսով, այս հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ «Պետությունն սպահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը»:
15. Օրենքը ՄԻԱԻ-ի մասին ավելի կոնկրետ դրույթներ է պարունակում, մասնավորապես՝ 8-րդ հոդվածը, որը երաշխավորում է Պաշտպանի և նրա աշխատակազմի բնականոն գործունեության համար պետական բյուջեի միջոցների հաշվին պատշաճ ֆինանսավորման սպահովումը: 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Պաշտպանի և նրա աշխատակազմի բյուջեն պետական բյուջեի մաս է, որը ֆինանսավորվում է առանձին տողով և նույն տողով հատուկ ֆինանսավորվում է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությունը: Պաշտպանը իր աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ներկայացնում է Կառավարությանը, որը հայտն ընդունելու դեպքում, այն ընդգրկում է պետական բյուջեի նախագծում: Եթե Կառավարությունն առարկություններ է ունենում Պաշտպանի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ, սպա պետական բյուջեի նախագծի հետ միասին այն ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Պաշտպանին է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը: 8-րդ հոդվածի

6-րդ կետի հիման վրա, Պաշտպանը մասնակցում է Ազգային ժողովում «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության ֆինանսավորմանը վերաբերող քննարկմանը:

16. 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, Պաշտպանի և նրա աշխատակազմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը «չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից»: Պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումը կատարվում է ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով:
17. 2021թ. մարտի 11-ին Կառավարության կողմից ընդունված և Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված Օրենքի նախագիծը նպատակ ունի ուժը կորցրած ճանաչել Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին ուղղված իր դիմում-նամակին կից փաստերի համառոտագրում՝ Մարդու իրավունքների պաշտպանը նկատել է, որ պաշտոնական գրավոր հիմնավորման մեջ Ֆինանսների նախարարությունը, որը Օրենքի նախագծի հեղինակն է, պնդել է, որ փոփոխությունն անհրաժեշտ է, որովհետև գոյություն ունեցող իրավական կարգավորումները խոչընդոտներ են ստեղծում Հայաստանում օտարերկրյա ներդրումների համար: Տրամադրված համառոտագրի համաձայն, Նախարարությունն այնուհետ հայտարարել է, որ գոյություն ունեցող դրույթը թույլ չի տալիս Կառավարությանը վերահստակցում անել մեկ ոլորտից մեկ այլ ոլորտի՝ գոյություն ունեցող ֆինանսական մարտահրավերները, այդ թվում՝ COVID-19 համավարակով կամ 2020թ. Ադրբեջանի հետ հակամարտությամբ պայմանավորված տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար: Ֆինանսների նախարարը նաև շեշտել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար մի շարք երաշխիքներ պահպանվում են, նկատի ունենալով այն փաստը, որ բյուջեն հաստատվում է Ազգային ժողովի կողմից, որը կարող է և թույլ չտալ Կառավարության կողմից խոշոր կրճատումների իրականացումը:
18. Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու առաջարկությունը սուր քննադատության է արժանացել ոչ միայն Մարդու իրավունքների պաշտպանի, այլ նաև քաղաքացիական հասարակության ազգային և միջազգային խմբերի,¹² Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի¹³ և Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական

¹² Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին ի աջակցություն 2021թ. մարտի 22-ին ՀԿ-ների հայտարարությունը https://www.ombuds.am/en_us/site/ViewNews/1590 այս հղումով: Տե՛ս նաև «Freedom House»-ի «Հայաստան. Իշխանությունները պետք է պաշտպանեն ժողովրդավարական հաստատություններն ու քաղաքացիական հասարակությունը», մամուլ հաղորդագրություն, 12 մարտի, 2021թ. , <https://freedomhouse.org/article/armenia-authorities-must-protect-democratic-institutions-and-civil-society>, և Խոշտանգումների կանխարգելման առցից հայի (ԽԿԱ) Գլխավոր քարտուղարի 26 մարտի, 2021թ. բաց նամակը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, <https://armenpress.am/eng/news/1047492.html>:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի 2021թ. մարտի 15-ի հայտարարությունը, որով Պալատն իր գորակցությունն է հայտնում Մարդու իրավունքների պաշտպանին <https://hetq.am/en/article/128550>:

ցանցի¹⁴ կողմից հրապարակված հայտարարություններում և բաց նամակներում:

3. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

19. Օրենքի նախագծի ընդունվելու դեպքում ուժը կորցրած է ճանաչվելու 8-րդ հոդվածի 5-րդ կետը, որը երաշխավորում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: Այս նույն դրույթը նաև սահմանում է, որ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումը կատարվում է ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով:

3.1. Բյուջետային կրճատումներին վերաբերող երաշխիքները

20. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին վերաբերող ֆինանսական խնդիրների համատեքստում կարևոր է վերհիշել ՄԻԱԻ-ներին և դրանց ֆինանսավորմանը վերաբերող համապատասխան միջազգային չափորոշիչները: Փարիզյան սկզբունքները շեշտում են, որ ՄԻԱԻ-ները պետք է իրենց տրամադրության տակ ունենան համապատասխան ֆինանսավորում՝ ապահովելու գործունեության բնականոն ընթացքը, կառավարություններից անկախությունը և չենթարկվելու ֆինանսական վերահսկողությանը:¹⁵ 2018թ. «Ընդհանուր դիտարկումներում» ՀԵՇ-ը այս պահանջը կապակցել է պետությունների՝ անգամ խիստ սահմանափակ ռեսուրսների պայմաններում մարդու իրավունքների խախտումներից առավել հաճախ տուժող, հասարակության ամենախոցելի անդամներին պաշտպանելու պարտավորության պահանջի հետ:¹⁶ 2015թ. բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը շեշտել է, որ ՄԻԱԻ-երը չպետք է ենթարկվեն անհիմն բյուջետային սահմանափակումների՝ համապատասխան մանդատի համաձայն ձեռնարկված գործողությունների արդյունքում:¹⁷
21. Ինչպես նշված է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի 2003թ. բանաձևում և Վենետիկի 2019թ. ընդունված սկզբունքներում, սեփական տրամադրության տակ միայն բավարար և անկախ ֆինանսական միջոցների պարագայում ՄԻԱԻ-ն ի վիճակի կլինի սպահավել մանդատով իրեն վերապահված

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի նախագահի բաց նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, 22 մարտի, 2021թ. <http://ennhri.org/wp-content/uploads/2021/03/Letter-of-Support-Armenian-NHRI.pdf>

¹⁵ Տե՛ս Փարիզյան սկզբունքները, Բ.2 (Կազմը և անկախության և բազմակարծության երաշխիքները):

¹⁶ Տե՛ս Հավատարմագրման ենթահանձնաժողովի Ընդհանուր դիտարկումների վերջին վերանայված տարբերակը, որն ընդունվել է ՄԻԱԻԳԴ-ի Բյուրոյի կողմից (այսուհետ՝ «ՀԵՇ Ընդհանուր դիտարկումներ») Ժնևում 2018թ. փետվարի 21-ին տեղի ունեցած նիստի ժամանակ, էջ 28:

¹⁷ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողով, թիվ 70/163 բանաձև Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին, A/RES/70/163, ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 17-ին, մաս 11: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 27/18 բանաձևը Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների մասին, A/HRC/RES/27/18, ընդունվել է 2014թ. հոկտեմբերի 7-ին, մաս 9:

գործողությունների, պատասխանատվությունների և գործառույթների լիարժեք, անկախ և արդյունավետ իրականացումը:¹⁸ Բավարար ֆինանսական միջոցները հատկապես կարևոր են այն դեպքերում, երբ ՄԻԱԻ-ի վրա են դրվում լրացուցիչ պատասխանատվություններ,¹⁹ ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի դեպքում, որը նաև Հայաստանի ազգային կանխարգելման մեխանիզմն է և հատուկ լիազորություններ ունի՝ կապված երեխայի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության առումով: Այս համատեքստում, ՀԵՀ-ը, հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի՝ վերահավատարմագրման մասին 2019թ. ներկայացված դիմումը, խրախուսում է Պաշտպանին շարունակել ջատագովությունը՝ հանուն անհրաժեշտ ֆինանսավորման ապահովման, որպեսզի վերջինս կարողանա լիովին և արդյունավետ իրականացնել իր մանդատով նախատեսված ողջ գործունեությունը:²⁰

22. ՀԵՀ-ը նաև նկատել է, որ ընդհանուր առմամբ ֆինանսական կարգավորումները պետք է այնպիսին լինեն, որ ՄԻԱԻ-ն ունենա լիարժեք ֆինանսական ինքնավարություն՝ որպես սեփական առաջնահերթությունները և գործունեությունը սահմանելու ընդհանուր ազատության երաշխիք: Այդ թվում, նշել է ֆինանսավորման՝ բյուջեի առանձին տողով ներկայացված լինելը, որը ՄԻԱԻ-ն պետք է կառավարի և տնօրինի ինքնուրույն:²¹ 2019թ. Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված Վենետիկի սկզբունքները, հատկապես օմբուդանենի ինստիտուտների վերաբերմամբ, շեշտում են, որ հարկ է խորհրդակցել Օմբուդանենի հետ և նրան պետք է խնդրել ներկայացնել առաջիկա ֆինանսական տարվա բյուջեի նախագիծը:²² Ի լրումն, այս հաստատությունների ընդունված բյուջեները չպետք է կրճատվեն ֆինանսական տարվա ընթացքում, եթե կրճատումն ընդհանուր առմամբ չի կիրառվում նաև այլ պետական հաստատությունների նկատմամբ:²³
23. Մտապահելով վերը բերված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասով Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումն ապահովելու մասին պետության համար բացահայտ սահմանվող պարտավորությունը ողջունելի է: Նմանապես, դրական է, որ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացնում է իր բյուջետային ֆինանսավորման հայտը, որը, Կառավարության կողմից առարկությունների դեպքում, քննարկվում է որպես ընդհանուր պետական բյուջեի նախագծի մաս: Դրական է նաև այն, որ Մարդու

¹⁸ Այս համատեքստում տե՛ս նաև ԵՄԽՎ 1615 (2003) հանձնարարականը Օմբուդանենի ինստիտուտի մասին, 8 սեպտեմբերի, 2003թ. , մաս 7.7: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողով, Վենետիկի սկզբունքներ, 3 մայիսի 2019թ. , մաս 21:

¹⁹ Տե՛ս ՀԵՀ-ի «Ընդհանուր դիտարկումները», որոնք ընդունվել են ՄԻԱԻԳ-ի Բյուրոյի կողմից դրա՝ 2018թ. փետրվարի 21-ին Ժնևում կայացած նիստի ընթացքում, էջ 28:

²⁰ ՀԵՀ գեկույցը և առաջարկությունները, մարտ 2019թ. , էջ 15:

²¹ Տե՛ս ՀԵՀ-ի վերանայված «Ընդհանուր դիտարկումները», որոնք ընդունվել են ՄԻԱԻԳ-ի Բյուրոյի կողմից դրա՝ 2018թ. փետրվարի 21-ին Ժնևում կայացած նիստի ընթացքում, էջ 29: Տե՛ս նաև ՄԱԶՕ-ՄԻԳՀԳ գործիքակազմը, դեկտեմբեր 2010թ. , էջ 146:

²² Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, Վենետիկի սկզբունքներ, 3 մայիսի, 2019թ. , մաս 21:

²³ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, Վենետիկի սկզբունքներ, 3 մայիսի, 2019թ. , մաս 21:

իրավունքների պաշտպանը մասնակցում է այս լսումներին: Մա թե՛ Ազգային ժողովի, թե՛ Մարդու իրավունքների պաշտպանի համար ևս մի հնարավորություն է՝ ժողովրդավարական խորհրդարանական բանավեճի համատեքստում քննարկել Մարդու իրավունքների պաշտպանի մանդատները, գործունեությունը և ֆինանսական կարիքները, և այս առումով նաև հնարավոր բարելավումները: Այն փաստը, որ Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի բյուջեն պետք է ներկայացվի պետական բյուջեում առանձին տողով, նույնպես օգնում է պահպանել այս ինստիտուտի ֆինանսական անկախությունը:²⁴

24. 8-րդ հոդվածի 5-րդ կետը համապատասխանում է վերը նշված չափորոշիչներին և սկզբունքներին այն իմաստով, որ կանխում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար բյուջեի՝ տարեց տարի կրճատումները, կանխում է այս ինստիտուտին հատկացվող բյուջեի անհարկի և անհիմն կրճատումները՝ այդ կերպ ամրապնդելով գործադիր իշխանությունից նրա անկախությունը: Եթե այս դրույթն անվերապահորեն հանվում է, ապա այսպիսի մոտեցումը կարող է էականորեն թուլացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անկախությունն ու գործունեության արդյունավետությունը, քանի որ այն կարող էր մարդու իրավունքի այս կարևոր ինստիտուտին անպաշտպան թողնել ապագայում հնարավոր բյուջետային կրճատումների հավանական զարգացումներում: Այսպիսի միջոցառումները կարող են վնասակար լինել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար և բացասական հետևանքներ ունենալ ընդհանրապես Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և հավասարության խթանման համար, հաշվի առնելով այս ինստիտուտի կարևոր դերը, ինչը նույնպես էական է օրենքի գերակայության պահպանման և ընդհանրապես ժողովրդավարական կառավարումն ապահովելու համար:
25. Թեև ճշմարիտ է, որ տարեկան բյուջեն հաստատվում է Ազգային ժողովի կողմից, և կարող է թվալ, թե սա ինքնին Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի համար պաշտպանության ինչ-որ ձև է ապահովում, այսպիսի պաշտպանությունը, առանձին վերցրած, բավարար չէ՝ ապահովելու Պաշտպանի լիարժեք ֆինանսական անկախությունը: Անհրաժեշտ են հավելյալ երաշխիքներ՝ ապահովելու, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը չի դառնա անհամապատասխան և/կամ անհիմն բյուջետային կրճատումների գոհ: **Վերը բերված նկատառումների հիման վրա առաջարկվում է պահպանել 8-րդ հոդվածի 5-րդ մասում առկա ձևակերպումը:**
26. Միննույն ժամանակ, ըստ անհրաժեշտության, հարկ է նկատի առնել գործող դրույթը նոր ձևակերպում պարունակող այլ դրույթով փոխարինելու հնարավորությունը, որն, այնուամենայնիվ, կտրամադրի բավարար

²⁴Այս համատեքստում, տե՛ս, ՀԵՃ-ի գեկույցը և 2020թ. դեկտեմբերի նիստի առաջարկությունները, Փոդոկրի ափի Մարդու իրավունքների ազգային խորհրդին տրվող հատուկ առաջարկությունները, էջ 8, որտեղ ՀԵՃ-ը ողջունել է օրենքում նոր դրույթով նախատեսվող, Պետական բյուջեի առանձին տողով Փոդոկրի ափի Մարդու իրավունքների ազգային խորհրդին բյուջեի հատկացումը:

երաշխիքներ՝ ապահովելու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի պաշտպանվածությունը անհարկի կամ կամայական բյուջետային կրճատումներից: Այս համատեքստում նկատի է առնվում այն, որ թերևս գոյություն ունեցող դրույթը գուցե գործնականում փոքր-ինչ զուրկ է ճկունությունից, քանի որ այն թույլ չի տալիս Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի բյուջեի որևէ կրճատում իրականացնել, անկախ հանգամանքներից: Ընդհանրապես, եթե Հայաստանի Հանրապետությունը հարկադրված է նվազեցնել իր ընդհանուր բյուջեն՝ տնտեսական դժվարությունների կամ ճգնաժամերի պատճառով, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին հատկացվող բյուջեի կրճատումներ թույլ տվող դրույթը, որը համահունչ կլինի բոլոր պետական մարմինների վրա ազդող ընդհանուր բյուջետային կրճատումներին որպես այդպիսին, չի համարվի Փարիզյան սկզբունքներով սահմանված չափորոշիչների խախտում:

27. Այս համատեքստում, այնուամենայնիվ, կարևոր է, որ Օրենքը շարունակի պաշտպանել Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսական անկախությունը՝ խուսափելու այնպիսի իրավիճակից, որի շրջանակներում գործադիրը կարող է անհարկի ազդել այս ինստիտուտի աշխատանքի վրա՝ սպառնալով սպազայում նվազեցնել ֆինանսավորումը: Բյուջետային գործընթացները չպետք է գործածվեն՝ այս տեսակի ինստիտուտի նկատմամբ քաղաքական հսկողություն սահմանելու համար, քանի որ այսպիսի քայլը կարող է վնասել ինստիտուտի անկախությանը: Այսպիսի մոտեցումը կանխելու եղանակներից է Օրենքում այնպիսի մասնավորեցումը, ըստ որի ֆինանսական դժվարությունների ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի բյուջեն կարող է նվազեցվել նախորդ ֆինանսական տարվա համեմատ՝ միայն որոշակի տոկոսով, որը, սակայն, չի գերազանցում Ազգային ժողովի, Նախագահի, Կառավարության կամ նմանատիպ այլ ինստիտուտների բյուջեների կրճատման տոկոսային չափը:²⁵ Այնուամենայնիվ, ինչպես նշված է Օրենքում ավելի վաղ արված փոփոխությունների մասին Վենետիկի հանձնաժողովի 2006թ. կարծիքում, կարելի է ավելացնել դրույթ՝ մասնավորեցնելով, որ պետական մարմինները չեն կարող օգտագործել բյուջետավորման գործընթացը՝ բյուջեից միջոցներ հատկացնելու համար այնպես, որ խաթարվի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անկախությունը և գործունեությունը²⁶ ի վնաս Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և հավասարության խթանման:

²⁵Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, Մարդու իրավունքների պաշտպանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների մասին կարծիք, դեկտեմբերի 22, 2006թ. , մաս 80, և նաև Վենետիկի հանձնաժողով, Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի նախագծի մասին կարծիք, դեկտեմբերի 12, 2016թ. , մաս 28, որը կրկնում է 2006թ. Կարծիքում ներկայացված կետերը: Տե՛ս նաև ՀԵՀ-ի դեկտեմբերի 7-18, 2020թ. նիստի զեկույցը և առաջարկությունները, Սերբիայի քաղաքացիների պաշտպանին (ՍՔՊ) ուղղված հատուկ առաջարկությունները, որտեղ ՀԵՀ-ը խրախուսում է ՍՔՊ-ին շարունակել ջատագովել օրենքում այնպիսի փոփոխությունները, որ ՍՔՊ-ի ֆինանսավորումը հնարավոր չլինի նվազեցնել, եթե այսպիսի կրճատումը չի կիրառվում բոլոր, նմանատիպ կարգավիճակ ունեցող ինստիտուտների նկատմամբ, էջ 32:

²⁶Վենետիկի հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում փոփոխությունների մասին կարծիք, 22 դեկտեմբերի, 2006թ. , մաս 81, և Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի նախագծի մասին կարծիք, 12 դեկտեմբերի, 2016թ. , մաս 28:

28. Նմանատիպ առաջարկություններ կարելի է գտնել ԵԱՀԿ այլ մասնակից պետությունների ՄԻԱԻ օրենսդրության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից վերջերս տրված կարծիքներում,²⁷ որոնցում նաև նշվել է, որ ՄԻԱԻ-ին հատկացված ֆինանսավորման ցանկացած կրճատում, նախորդ տարվա հետ համեմատ, պետք է օբյեկտիվորեն հիմնավորված լինի:²⁸ Ընդհանուր առմամբ, եթե բյուջետային կրճատումներն անխուսափելի են, դրանք չպետք է անհամաչափորեն թիրախավորեն ՄԻԱԻ-ները, իսկ ֆինանսավորման կրճատումը պետք է համապատասխանի այլ առանցքային ոլորտների ֆինանսավորմանը:²⁹ Սա հատկապես կարևոր է հայաստանյան համատեքստում՝ հաշվի առնելով այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի բյուջեն ընդհանուր պետական բյուջեի մի փոքր մասն է միայն:
29. Ուստի սրանից բխում է, որ 8-րդ հոդվածի 5-րդ մասի ուժը կորցրած ճանաչումը, առանց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին ի վնաս, անհարկի կամ նույնիսկ անհիմն բյուջետային կրճատումները կանխելուն ուղղված համարժեք երաշխիք սահմանելու, կվտանգի այս ինստիտուտի ֆինանսական անկախությունը և գործունեությանը: Փոխարենը, առաջարկվում է պահպանել 8-րդ հոդվածի 5-րդ մասը կամ հավանաբար ամրապնդել այն՝ ավելի ճկուն դրույթ ներմուծելով, ինչը թույլ կտա ֆինանսական կրճատումներ անել մի շարք հիմնավոր հանգամանքներում, մինևույն ժամանակ ներառելով բավարար երաշխիքներ՝ պահպանելու Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսական անկախությունը և ապահովելու ինստիտուտի անխափան գործունեությունը:
30. Ի վերջո, պարզ չէ՝ արդյոք Հայաստանում համապատասխան որոշում կայացնողները պլանավորում են ներմուծել կրճատումներ նաև այլ ինստիտուտների և պետական մարմինների բյուջեներում: Ցանկացած պարագայում, բյուջեում հետագա կրճատումները չպետք է անհամաչափորեն թիրախավորեն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված դիմումում նշվում է, որ նրա Գրասենյակին հատկացվում է բոլոր պետական և սահմանադրական մարմինների համեմատ ամենափոքր բյուջեն: Դիմումում նաև ասում է, որ ավելի մեծ բյուջեներ ունեցող պետական հաստատությունները դեռևս չեն ստացել սպառնալիքներ բյուջետային կրճատումների մասին և նրանց բյուջեներում նույնիսկ աճ է գրանցվել, օրինակ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դեպքում: Այս ամենը մտքում ունենալով՝ գերկարևոր է, որ Հայաստանում համապատասխան որոշում

²⁷ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Սլովակիայի Մարդու իրավունքների ազգային կենտրոնի ստեղծման ակտում փոփոխություններ անելու օրենքի նախագծի մասին, 21 հունվարի, 2019թ. , մաս 46: Տե՛ս նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Շվեյցարիայի Մարդու իրավունքների ազգային ինստիտուտին աջակցության դաշնային օրենքի նախագծի մասին, 31 հոկտեմբերի, 2017թ. , մաս 88, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Բուլղարիայի Օմբուդսմանի մասին ակտում փոփոխություններ և լրացումներ անելու մասին օրենքի նախագծի մասին, 29 մարտի, 2017թ. , մաս 33, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Իսլանդիայի մարդու իրավունքների ազգային ինստիտուտի մասին օրենքի նախագծի մասին, 6 փետրվարի, 2017թ. , մաս 76:

²⁸ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Սլովակիայի մարդու իրավունքների ազգային կենտրոն ստեղծելու մասին ակտում փոփոխությունների օրենքի նախագծի մասին, 21 հունվարի, 2019թ. , մաս 46:

²⁹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը Բուլղարիայի օմբուդսմանի ակտում փոփոխություններ և լրացումներ անելու մասին օրենքի նախագծի մասին, 29 մարտի, 2017թ. , մաս 33: Տե՛ս նաև ՄԱԶՕ-ՄԻԳՀԳ, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների հետ համագործակցության գործիքակազմ (այսուհետ՝ ՄԱԶՕ-ՄԻԳՀԳ գործիքակազմ), դեկտեմբեր 2010թ. , էջ 254:

կայացնողներն իրականացնեն բյուջետային իրավիճակի ընդհանուր վերանայում, և համապատասխանաբար հիմնավորեն տվյալ տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը նվազեցնելու ցանկացած ապագա փորձ: Բյուջեի այսպիսի կրճատումները պետք է ձեռնարկվեն միայն բոլոր կամ այլ պետական հաստատությունների մեծ մասի բյուջեների կրճատման ամօրյա լայն համատեքստում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ Ա

Պահպանել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի բյուջեի կրճատումները կանխող 8-րդ հոդվածի 5-րդ դրույթը կամ այլապես փոխարինել այն մեկ այլ դրույթով, որը թույլ կտա բյուջետային կրճատումներ անել կոնկրետ հիմնավորված հանգամանքներում՝ մինչև ժամանակ ապահովելով Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսական անկախությունը և արդյունավետ գործունեությունը:

3.2. Ֆինանսական միջոցների բաշխումը

31. 8-րդ հոդվածի 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչելը Օրենքից նաև կհեռացնի գործող կարգավորումն առ այն, թե ինչպես են ֆինանսական միջոցները հատկացվում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, մասնավորապես՝ ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով:
32. Ըստ ՀԵՀ-ի կողմից 2018թ. արված Ընդհանուր դիտարկումների, ազգային օրենքները պետք է, ի թիվս այլ դրույթների, ապահովեն ֆինանսավորման համապատասխան հատկացումների ժամանակին տրամադրումը, քանի որ սա հատկապես կարևոր է՝ ապահովելու հմուտ աշխատակազմի համապատասխան մակարդակը:³⁰ Եթե 8-րդ հոդվածի 5-րդ մասը լրիվությամբ ուժը կորցրած ճանաչվի, առանց ֆինանսական միջոցների հատկացումները կարգավորող նոր այլընտրանքային առաջարկությունների, օրենսդրությունում կառաջանա բաց, որը չի համապատասխանի ՀԵՀ-ի կողմից մշակված պահանջներին: Ավելին, Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված բացատրությունները 8-րդ հոդվածի 5-րդ մասի ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտության մասին, ըստ Մարդու իրավունքների պաշտպանի դիմում-նամակին կից համառոտագրի, մասնավորապես «օտարերկրյա ներդրումների համար խոչընդոտների» և ֆինանսական դժվարությունները հաղթահարելու նպատակով մի ոլորտից մյուսին ֆինանսավորման վերահատկացումների անկարողության մասով այստեղ, թվում է, վերաբերելի չեն: Նույնիսկ կրճատված ֆինանսավորման

³⁰ Տե՛ս ՀԵՀ-ի վերանայված Ընդհանուր դիտարկումները, որոնք ընդունվել են ՄԻԱԲԳԴ-ի Բյուրոյի կողմից Ժնևում 2018թ. փետրվարի 21-ի նիստում, էջ 29:

պարագայում, Օրենքը պետք է մասնավորեցնի բյուջետային միջոցների հատկացումն ու բաշխումը:

33. Առաջարկվում է **ձեռնպահ մնալ Օրենքից 8-րդ հոդվածի 5-ի մասի այս հատվածը հանելուց և պահպանել դրույթն այնպես, ինչպես կա:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ Բ.

Ձեռնպահ մնալ Օրենքից 8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին ֆինանսական միջոցների հատկացման եղանակի կարգավորումը հետացնելուց:

4. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

34. ԵԱՀԿ մասնակից Պետությունները պարտավորվել են ապահովել օրենսդրության «ընդունումը հանրային ընթացակարգից հետո» (Կոպենհագենյան փաստաթուղթ, 1990թ., մաս 5.8):³¹ Այնուամենայնիվ, հիմնական հանձնառությունները մասնավորեցնում են, որ «[օ]րենսդրությունը կձևակերպվի և կընդունվի որպես կամ ուղղակիորեն, կամ ընտրված ներկայացուցիչների միջոցով ժողովրդի կամքն արտացոլող բաց գործընթաց» (1991թ. Մոսկվայի փաստաթուղթ, մաս 18.1):³² Վենետիկի հանձնաժողովի՝ Օրենքի գերակայության ստուգաթերթի կը նաև շեշտում է, որ հանրությունը պետք է փոփոխություններ անելու և իր մասնակցությունը բերելու հնարավորություն ունենա: ³³ Պարզ է, որ նույնը կիրառվում է նաև, և առավելապես, մշակվող օրենքից ուղղակիորեն ազդվող անձանց և հաստատությունների նկատմամբ:
35. Նամակ-դիմումին կից համառոտագրում Մարդու իրավունքների պաշտպանը շեշտել է, որ օրենքի նախագծի մշակման ընթացքում և Օրինագիծը շրջանառելուց առաջ, օրենքի այս նախագիծը չի քննարկվել իր կամ իր աշխատակազմի հետ: Բացի այդ, թվում է՝ Օրենքի նախագծի մասին որևէ հանրային քննարկում չի ծավալվել նախքան այն Ազգային ժողով ներկայացնելը: Մարդու իրավունքների պաշտպանը նաև նշել է, որ միայն ՋԼՄ-ներից է իմացել, որ այս հարցը ներառված է 2021թ. մարտի 11-ի Կառավարության նիստի օրակարգում: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանից ստացված տեղեկությունների, Կառավարությունը վերջերս կասեցրել է Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների և Կառավարության նիստերին մասնակցելու նախկինում ընդունված աշխատակարգը: Մինչև ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը շեշտել է, որ տարբեր առիթներով, արտահայտել է իր

³¹ Հասանելի է՝ <<http://www.osce.org/fi/odihr/elections/14304><http://www.osce.org/fi/odihr/elections/14304>>.

³² Հասանելի է՝ <<http://www.osce.org/fi/odihr/elections/14310><http://www.osce.org/fi/odihr/elections/14310>>.

³³ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի, *Rule of Law Checklist*, CDL-AD(2016)007, Մաս II.A.5.

պատրաստակամությունը՝ քննարկել անցյալում Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի փոփոխությունների տարբերակները:

36. ՀԵՀ-ը շեշտել է, որ ՄԻԱԻ մասին օրենքների փոփոխության դեպքում հարկ է ձեռնարկել խորհրդակցությունների բաց, թափանցիկ և իմաստալից գործընթաց, այդ թվում՝ հենց ՄԻԱԻ-ի մասնակցությամբ:³⁴ Որպեսզի օրենքի նախագծի վերաբերյալ խորհրդակցությունները արդյունավետ լինեն, դրանք պետք է կազմակերպվեն այնպես, որ բավականաչափ ժամանակ տրամադրեն շահագրգիռ կողմերին՝ պատրաստելու և ներկայացնելու առաջարկություններ օրենքի նախագծի մասին, այնինչ Պետությունը պետք է ստեղծի պատշաճ և ժամանակին գործող հետադարձ կապի մեխանիզմ, որի միջոցով իշխանությունները պետք է ճանաչեն այսպիսի մասնակցությունը և արձագանքեն դրան՝ սպասեցնելով կոնկրետ մեկնաբանություններ/առաջարկություններ ներառելու կամ չներառելու մասին հստակ հիմնավորումներ:³⁵ Հանրային քննարկումները և բաց ու ներառական բանավեճը կմեծացնի բոլոր շահագրգիռ կողմերի՝ գործին վերաբերող բոլոր գործոնների ընկալումը և կմեծացնի ընդունված օրենքի և ընդհանուր առմամբ ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը:³⁶
37. Այսպիսով էական է, որ ՄԻԱԻ-ը ներգրավվի իր վրա ազդող կամ իրեն վերաբերող օրենքի նախագծի վերաբերյալ առարկայական խորհրդակցություններում, օրենսդիր գործընթացի բոլոր կառավարության կողմից օրենքի նախագծի պատրաստման, խորհրդարանական քննարկումների և օրենքի ընդունման, ինչպես նաև օրենսդրության հետագա քննարկման փուլերում:³⁷ Հաշվի առնելով այն, որ կարծես Օրենքի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելուց առաջ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ պատշաճ քննարկումներ տեղի չեն ունեցել, Ազգային ժողովին վճռականորեն կոչ ենք անում կազմակերպել խորքային և առարկայական հանրային քննարկումներ, որում պետք է ներգրավված լինեն

³⁴ Օրինակ՝ Նորվեգիայում ՄԻԱԻ-ի զարգացման առումով ՀԵՀ-ը խորհուրդ է տալիս իրականացնել հետևյալը՝ «Կառավարությունը պետք է անհապաղ նախաձեռնի ներառական և խորհրդակցական գործընթաց՝ ապահովելու համակողմանի աջակցություն նոր ՄԻԱԻ-ի համար», շեշտելով, որ «գործընթացին պետք է մասնակցեն [արտաքին հաստատություններ], քաղաքացիական հասարակության խմբեր և այլ շահագրգիռ կողմեր», տե՛ս ՄԻԱԻԳԳ ՀԵՀ, [2011թ. գեկույց](#), Նորվեգիա, հոկտեմբեր, 2011թ., էջեր 15-16:

³⁵ Տե՛ս օրինակ «Հանրային որոշումների կայացման գործընթացներում և սոցիալականների մասնակցության խթանման մասին առաջարկություններ» (ԺՀՄԻԳ-ի կողմից Խաղաղ հավաքների և միավորումների ազատության մասին հավելյալ մարդկային չափանիշի 2015թ. նիստի լուսանցքներում ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված Քաղաքացիական հասարակության ֆորումի մասնակիցների մշակմամբ), Վիեննա, 15-16 ապրիլ, 2015թ. :

³⁶ Տե՛ս, օրինակ, ԺՀՄԻԳ, «Կարծիք Եվեյցարիայի Մարդու իրավունքների ազգային ինստիտուտին աջակցության մասին դաշնային օրենքի նախագծի մասին», Վարշավա, 31 հոկտեմբերի, 2017թ., մաս 95:

³⁷ Տե՛ս նաև [Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների և խորհրդարանների միջև հարաբերությունների մասին Բեյգրադի սկզբունքները](#) (2012թ.), որոնք ՄԻԳՀԳ-ը խորհուրդ է տալիս օգտագործել որպես ուղեցույց՝ ազգային մակարդակում մարդու իրավունքների խթանման և պաշտպանության նպատակով ՄԻԱԻ-ների և խորհրդարանների միջև համագործակցությունը ամրապնդելու համար, հատկապես մաս 4-ը, որտեղ նշվում է, որ «ՄԻԱԻ-ի ստեղծման մասին օրենքում հնարավոր փոփոխությունների շուրջ քննարկումների և այդ փոփոխությունների ընդունման ընթացքում խորհրդարանները պետք է ուսումնասիրեն առաջարկվող այսպիսի փոփոխությունները՝ նպատակ ունենալով ապահովել ինստիտուտի անկախությունը և արդյունավետ գործունեությունը, հարկ է նաև խորհրդակցություններ կազմակերպել ՄԻԱԻ-ների անդամների և այլ շահագրգիռ կողմերի, օրինակ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ»:

նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը և այլ շահագրգիռ անձինք:

38. Օրենքի նախագիծը մշակողները պատրաստել են Օրենքի նախագծի բացատրագիրը, որը, Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով, թվարկում է առաջարկվող փոփոխությունը հիմնավորող մի շարք պատճառներ, բայց պարզ չէ՝ արդյոք այս բացատրագրում հղում արվում է համապատասխան եզրակացությունների համար հիմք հանդիսացած որևէ հետազոտության կամ ազդեցության գնահատման: Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսական անկախության և գործունեության վրա Օրենքի նախագծի հավանական ազդեցությունը՝ էական է կարգավորումների ազդեցության խորքային գնահատում իրականացնել: Այսպիսի գնահատման մեկնակետը պետք է լինի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ընդհանուր գործունեության մասին (սեռով և այլ հատկանիշներով տարաբաշխված, ըստ վերաբերելիության և համապատասխանության) տվյալների հավաքումը և ուսումնասիրությունը, այդ թվում՝ տարվա ընթացքում գրանցված բողոքների թիվը, տարիների ընթացքում դրսևորված միտումները, Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունների թիվը և բնույթը, բողոքն ուսումնասիրելու համար պահանջվող միջին տևողությունը: Բացի այդ, այս գնահատումը պետք է պարունակի խնդրի պատշաճ վերլուծություն, այսինքն՝ այն պետք է ուրվագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասի առավելությունները և թերությունները և ապա պետք է կիրառի սպացուցահեն մեթոդներ՝ որոշարկելու օրենքի բարելավման ամենաարդյունավետ և ամենաարդյունավոր տարբերակը միևնույն ժամանակ պահպանելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անկախությունը և արդյունավետ գործունեությունը:³⁸ Եթե ազդեցության այսպիսի գնահատում դեռևս չի իրականացվել, օրենքի նախագիծը մշակողներին քաջալերում ենք նախաձեռնել այսպիսի խորքային ուսումնասիրություն: Ստատուս քվոյի վերաբերյալ հավաքված տվյալները, առաջարկվող բարեփոխման անհրաժեշտությունը և հավանական ազդեցությունը պետք է դառնան Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի մասնակցությամբ Ազգային ժողովում կազմակերպվելիք հանրային քննարկման առարկա :
39. Վերոնշյալի լույսի ներքո իշխանությունները պետք է ապահովեն Օրենքի նախագծի և Մարդու իրավունքների պաշտպանին վերաբերող ցանկացած այլ օրենսդրական նախաձեռնության շուրջ խորհրդակցությունների անցկացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մասնակցությամբ: Այսպիսի խորհրդակցությունները պետք է տեղի ունենան ժամանակին և օրենսդիր գործընթացի բոլոր փուլերում:
40. Իշխանությունները, մասնավորապես Օրենքի նախագծի հեղինակները և Ազգային ժողովը պետք է ապահովեն Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի փոփոխությունների շուրջ բաց,

³⁸ Տե՛ս, օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, [Ուզբեկստանի Հանրապետությունում օրենսդիր գործընթացի խորհրդարանական գնահատումը](#) (11 դեկտեմբերի, 2019թ.), Առաջարկություններ ԺԲ և ԺԳ, և Վենետիկի հանձնաժողով, [Օրենքի գերակայության ստուգաթեսթիկ](#), CDL-AD(2016)007, Մաս II.A.5:

ներառական, առարկայական և արդյունավետ խորհրդակցությունները՝ Մարդու իրավունքների պաշտպանի և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

ԱՌ ԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ Գ.

Իշխանությունները պետք է ապահովեն Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի փոփոխությունների շուրջ բաց, ներառական, առարկայական և արդյունավետ խորհրդակցությունները՝ Մարդու իրավունքների պաշտպանի և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

[ՏԵՔՍՏԻ ՎԵՐՁԸ]